ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԹԵՐԹ

ԹՌԻՉՔ

№ 5

• ԹԻՎ 5
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
2010 Թ.

Լույս է տեսնում
2009թ.
Հոկտեմբերից

Համախմբվենք յուրաքանչյուրիս և ընդհանուր խնդիրների շուրջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ամեն նոր ուսումնական տարվա հետ նոր հույսեր են արթնանում, որ այս մի տարին, իր որակական հատկանիշներով, շահեկանորեն կտարբերվի նախորդներից... Այս սպասելիքներն արդարանում են, թե ոչ՝ թողնենք հասարակության ու պատմության դատին: Արդ ցանկանում եմ անդրադառնալ առավելապես հետևյալ մի քանի հարցերին.

- ✓ Ինչքանո՞վ է մեր ազգային հոգեկերտվածքում պահպանվել կրթության նկատմամբ յուրահատուկ դրական վերաբերմունքը:
- ✓ Ի՞նչ ապագա է խոստանում մեզ կրթական ոլորտի ներկա վիճակը:

Այն, որ հայ ժողովուրդը պատմականորեն առանձնահատուկ վերաբերմունք ունի կրթության նկատմամբ, ակնհայտ փաստ է: Թեկուզ այն, որ հայ հասարակության տարբեր շերտերում շատ կոշտ մրցակցություն է գնում առ այն, թե ում երեխան որ ուսումնական հաստատության դիպլոմ կունենա, արդեն վկայում է, որ մեզանում կրթությունը դիտվում է որպես արժեք. սա միանշանակ: Բայց, ցավոք, ես չվրիպեցի՝ ասելով, որ մրցակցությունը դիպլոմի համար է, այլ ոչ թե կրթության (իհարկե, հասկանալի է, որ ասվածը չեմ բացարձականացնում՝ հաշվի առնելով առանձին դեպքերում գրանցվող լուրջ հաջողությունները):

Առաջին հայացքից ի՞նչ վատ բան կա, երբ մարդը ուզում է դիպլոմ ունենալ, առավել ևս, երբ այս կատեգորիայի մարդիկ բուհական միջավայրում ակամա շփումների միջոցով, այնուամենայնիվ, անձնական աճ են ունենում:

Փորձեմ թվարկել, թե ես ինչպիսի վնասներ եմ տեսնում.

- Շատ հաճախ այդպիսիները զբաղեցնում են առավել արժանավորների տեղերը՝ նրանց զրկելով որոշակի հնարավորություններից:
- Իրենց հնարավորություններով ու մոտեցումներով իջեցնում են ուսումնական հաստատությունների մակարդակը:
- Վերջապես՝ ախորժակն ուտելիս է բացվում. դիպլոմն ստանալուց անմիջապես հետո հիմա էլ լծվում են ամեն գնով աշխատանք ձարելու գործընթացին՝ իր բոլոր տհաճ հետևանքներով հանդերձ:

Արդյունքում իջնում են կրթության, մասնագիտական կարողությունների, ուսումնական հաստատությունների մակարդակների ձողանիշերը, նվազում է մեր ազգային պոտենցիալը, մեծանում են կոռուպցիոն ռիսկերը, և կրթական որակի վերարտադրության ցիկլը աշխատում է նախորդին երնեկ տալու տենդենցով:

Կրկին ցավով նշեմ, որ այս երևույթի արմատները բավականին խորն են ու գնում են դպրոց, ընտանիք...

Լավ, իսկ ո՞րն է լուծումը: Այն փնտրելու ուղիներից մեկը տանում է դեպի իրական շահագրգիռ կողմերի որոնում, ինչպիսիք են, օրինակ, մեր պետականությունն ու նրա հզորացման ջատագովները, յուրաքանչյուր ծնող, ով հետաքրքրված է իր երեխայի ապագայով, ցանկացած քաղաքացի, ով ուզում է ապրել բարեկեցիկ կյանքով և այլն՝ ասել է թե՝ մենք: Հաջորդ հարցն է առաջանում. ի՞նչ է պահանջվում թվարկված մարդկանցից յուրաքանչյուրից:

Պատասխանը շատ պարզ է ու հասանելի՝ վերաբերմունքի փոփոխություն ու կամքի դրսևորում: Եվ երբեք չնայենք, թե ինչ է անում մեր կողքինը, ուղղակի մտածենք մեր սեփական վարքի մասին...

ՄԵՐ ՄԱՍԻՆ

«Թռիչք» հկ-ի սեպտեմբերյան ընդհանուր ժողովն իր բնույթով առանձնացավ նրանով, որ ի մի բերվեցին արձակուրդների ընթացքում իրականացրած աշխատանքներն ու ծրագրերը և պլանավորվեց կազմակերպության մարտավարությունը մինչև 2011թ.: Տրվեցին գնահատականներ ինստիտուցիոնալ զարգացման ճանապարհին կազմակերպության ունեցած հաջողություններին ու ձեռքբերումներին: Առանձնահատուկ ուշադրության արժանացավ այն փաստը, որ այս օրերին, երբ լույս է տեսնում «Թռիչք» թերթի հինգերորդ համարը, լրանում է նրա գոյության մեկ տարին:

Կատարվեցին որոշակի փոփոխություններ հկ-ի տարբեր բաժիններում: Արդյունքում ընտրվեցին բաժինների պատասխանատուներ: Ստորև ներկայացնում ենք այդ ընտրությունների արդյունքները.

Հանրային կապերի բաժին - պատասխանատու՝ հկ-ի փոխնախագահ Ժենյա Նասիբյան (ՎՊՄԻ-ի

Ալիսա Գալստյան (ՎՊՄԻ-ի հայկական բաժնի II կուրսի մագիստրանտ), կրթական բաժնում օգնական՝ Էդգար Չատինյան (ՎՊՄԻ-ի հայկական բաժնի III կուրսի ուսանող), երիտասարդական թևի կազմակերպչական աշխատանքներում օգնական՝ Վահագն Դանիելյան (Ամիրդովլաթ Ամասիացի բժշկական ինստիտուտի ատամնաբուժության բաժնի ուսանող):

Մշակութային բաժին և պատանեկան թև - պատասխանատու՝ Լիլիթ Համբարձումյան (ՎՊՄԻ-ի դպրոցական բաժնի շրջանավարտ, ԵՊՀ-ի կողմից իրականացվող «Սոց աշխատանք և խնամք» վերապատրաստման դասընթացի մասնակից), օգնականներ. մշակութային

կրթության կազմակերպում և կառավարում բաժնի II կուրսի մագիստրանտ), օգնական՝ Արուսյակ Սուքիասյան (ՎՊՄԻ-ի թարգմանչության բաժնի ուսանող):

Կրթական բաժին և երիտասարդական թև - պատասխանատու՝ բաժնում՝ Արփինե Մարտիրոսյան (ՀՊԱՀ, հողաշինարարություն և հողային կադաստր բաժին, IV կուրս), պատանեկան թևում՝ Հասմիկ Սարգսյան (ՎՊՄԻ, անգլիական բաժին, IV կուրս):

Օրագրային բաժին - պատասխանատու՝ Անի Ղումաշյան (ՎՊՄԻ-ի

հոգեբանության բաժնի մագիստրոս):

«Թռիչք» թերթի խմբագրի պարտականությունները ժամանակավորապես կկատարի հկ-ի ղեկավար Հովհաննես Նիկողոսյանը:

Հկ-ում ներկայումս գործում են 3 պատանեկան խմբակներ՝ լրագրողական, գրական-գեղարվեստական և «Կրտսեր հայորդաց»: Հոկտեմբեր ամսում կիրականացվի նոր՝ լրագրողական 3-րդ խմբակի սաների ընտրություն:

«Թռիչք» հկ-ի ողջ անձնակազմը կազմակերպության մեջ ունեցած ծանրակշիռ ավանդի համար առանձնահատուկ ջերմությամբ իր երախտագիտությունն է հայտնում Լիլիթ Ղազարյանին, ով հադիսանում է լրագրողական առաջին և երկրորդ խմբակների ղեկավարը, «Թռիչք» թերթի հիմնադիրներից ու առաջին խմբագիրը (նա ներկայումս բնակվում է Մոսկվայում):

Ալիսա Գալստյան

«Թռիչք» Արագածի վրայով կամ մեր արտասովոր արկածները Արագած լեռան վրա

Գաղափարը ծնվեց հանպատրաստից և անմիջապես ընդունվեց ներկաների կողմից...

Ամառային արձակուրդներն արդեն մոտենում էին ավարտին, և ցանկությունը մեծ էր մի որևէ հիշարժան միջոցառում կազմակերպել: Կազմակերպությունում ընդհանուր մոտեցում կա՝ միշտ դեպի վեր, միշտ դեպի նոր մակարդակ, դեպի նոր բարձունքների նվաճում: Ու արշավի վայրի ընտրությունը կանգ առավ Արագածի վրա:

Օրը որոշված էր. մեր քառագագաթ հսկայի հարավային գագաթը պետք է հաղթահարեինք օգոստոսի 26-ին, որն, ի տարբերություն նախորդող տամուկ ու չտրամադրող օրերի, բացվեց բավականին արևոտ՝ բազմապատկելով արշավի մասնակիցների եռանդը:

18 պատանիներից ու երիտասարդներից կազմված խումբը միկրոավտոբուսով Արագածի լանջն ի վեր բարձրանալիս՝ Ամբերդ տանող ճանապարհից հազիվ էր մի քանի կիլոմետր բարձրացել, երբ լեռան մագնիսական դաշտերի, ճանապարհի թեքության ու օդի նոսրության ազդեցության տակ անսպասելի վերջացավ մեքենայի վառելիքն ու ... ու սա սկիզբն էր արկածներով լի օրվա...

Ճանապարհը մինչև Քարի լիճ հաղթահարեցինք ինքնաթափ բեռնատարի թափքում, որի վրա եռագույն էինք պարզել ու բարձր տրամադրությամբ, միմյանց քաջալերելով գնում էինք դեպի առաջ...

Լճից սկսած ճանապարհ ընկանք ոտքով՝ ուրախ այն մտքից, որ եղանակը լավն է:

Բայց...

Հազիվ մի քանի հարյուր մետր առաջ գնացած կլինեինք, երբ անձրևի առաջին կաթիլների սառնությունն զգացինք մեր դեմքերի վրա: Նույնիսկ մեկը կատակեց. «Կարո՞ղ ա մի հատ էլ կարկուտ գա»: Կատակասերն այդ պահին չէր պատկերացնում, որ իր կատակն, ըստ էության, մարգարեություն էր:

Ո՛չ կարկուտը, ո՛չ նրան հաջորդող ձյունը չկարողացան կոտրել արշավորդների ոգին, որոնց թրջված շարքը հայոց եռագույնի առաջնորդությամբ, օձագալար, քայլ առ քայլ մոտենում էր գագաթին...

Շարունակությունը 3-րդ էջում

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԹՌԻՉՔ

Մեր քաղաքի մշակույթը

Վանաձորի թիվ 3 մշակույթի տունը ճանաչված է մեր քաղաքում որպես ակտիվ մշակութային օջախ: Թիվ 3 մշակույթի տունը 2000թ.-ից ղեկավարում է արվեստի նվիրյալ Համլետ Երիցյանը:

Այստեղ գործում են երաժշտական բաժիններ՝ դաշնամուր, վոկալ, ժամանակակից պարեր, ինչպես նաև՝ ասմունքի, դիզայնի, կերպարվեստի, կիրառական արվեստի, արհեստների և այլ բաժիններ: 2000-2003 թթ.-ին տարբեր խմբերի պարապմունքներին հաճախում էին մոտ 150 երեխաներ, իսկ այժմ, ցավոք, ավելի քիչ: Նոր խմբակներ բացվում են, երբ տվյալ խմբակում դիմորդների թիվը լինում է 5 հոգուց ավելի:

Թիվ 3 մշակույթի տանը տարվա ընթացքում շատ միջոցառումներ են լինում, այդ թվում նաև ամառանը: Ուղղակի երեխաներից շատերը քաղաքում չեն լինում և ոչ լրիվ կազմով են խմբերը հանդես գալիս: Արդեն շուրջ մեկ տասնամյակ պարոն Երիցյանի անմիջական ղեկավարությամբ մասնակցում են հանրապետական ու քաղաքային տոներին կազմակերպվող միջոցառումներին:

Արդեն ավանդույթ է դարձել, որ հունիսի 1-ին տարաբնույթ միջոցառումներով հանդես են գալիս կենտրոնի սաները՝ ուրախացնելով իրենց հասակակիցներին և ոչ միայն: Տեղի են ունենում նաև մրցույթներ և հաղթողներին, պատվոգրերից բացի, տրվում են հուշանվերներ:

Ամեն տարի, համերգներից բացի, լինում են արշավներ և էքսկուրսիաներ, բայց այս տարի համերգները այնքան շատ են եղել, որ արշավ և էքսկուրսիա կազմակերպել այդպես էլ չի հաջողվել: Արդեն 3 տարի է այս մշակութային օջախի սաները համերգներով գնում են Լոռու մարզի տարբեր համայնքներ և, ինչպես նշում է Համլետ Երիցյանը. «Համերգների հետ լինում են ցուցահանդեսներ»:

Հարկ է նշել նաև, որ այստեղ հաճախող երեխաները նաև անհատապես են մասնակցում տարբեր փառատոնների՝ գրավելով պատվավոր հորիզոնականներ: Երրորդ մշակույթի տան պարային խումբը՝ նախկինում «Գոհար», այժմյան «Զարթոնք» համույթը, բազմիցս դարձել է դափնեկիր տարբեր փառատոններում:

Մշակույթի տունը սեպտեմբերի 1-ին առաջին դասարան հաճախող երեխաների համար կազմակերպել է միջոցառում, որի ժամանակ բաժանվել են նաև նվերներ:

Մերի Մարանդյան

Սպորտդպրոցը և նրա ծրագրերը

Վանաձոր քաղաքի սպորտդպրոցը ստեղծվել է 1966թ-ին: Ներկայումս մարզադպրոցում մարզվում են շուրջ 500 պատանիներ՝ ազատ ըմբշամարտ, սամբո, ձյուդո, բռնցքամարտ, շախմատ մարզաձևերով: Բայց չնայած այն բանին, որ սպորտդպրոցը կատարում է պետպատվերներ և դրա համար ֆինանսավորվում է պետության կողմից, այնուամենայնիվ, կառույցը չի համագործակցում պետական այլ մարմինների հետ:

Այս տարի որոշվել էր մարզադպրոցի սաների համար կազմակերպել ամառային հանգիստ, բայց, չունենալով համապատասխան հովանավորներ, չկարողացան իրականացնել այդ ծրագիրը:

Սպորտդպրոցը պատրաստվում է մի շարք միջոցառումների և մրցումների, որոնցից մեկը Ստեփան Սարգսյանի մրցաշարն է: Բայց հնարավոր է, որ մրցաշարը անցկացվի Երևանում, քանի որ այս տարի մրցաշարի տասնհինգամյակն է:

ՀՀ անկախության օրվա կապակցությամբ մարզադպրոցը կազմակերպել է սամբոյի բաց առաջնություն:

Վաչե Մատինյան

Շուշին ազատագրված է

Հայոց Շուշին ավելի քան 70 տարի է՝ գտնվում է գերության մեջ: 1988թ մայիս-սեպտեմբեր ամիսներին Շուշին ամբողջովին հայաթափվեց: Թուրքերը մահ էին սփռել մարզկենտրոն Ստեփանակերտի վրա: Քաղաքն անընդհատ ռմբակոծվում էր ոչ միայն Շուշիից, այլև Ջանհասանից, Քյոսալարից և այլ տեղերից: 1991 թ նոյեմբերից մինչև 1992թ մայիսի սկիզբը այդ կրակակետերից Ստեփանակերտի վրա արձակվել էր 4741 արկ: Իսկ այդ ժամանակ զոհվել և վիրավորվել են շատ մարդիկ: Թուրքերն ամեն ինչ անում էին, որպեսզի գրավեն Շուշին, սակայն հայերը պակաս չեն մնում և մայիսի 8-ի վաղ առավոտյան անցնում են հակահարվածի: Արդեն հայերի հսկողության տակ էին շրջակա բարձունքները: Ազատամարտիկները գրավել էին մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, մտել էին Շուշի ու սկսել կրակակետերի ոչնչացումը: Շուշիի պաշտպանությունը ձեղքվել էր հյուսիս-արևելքից: Կռիվներ էին տեղի ունենում շուկայի շրջակայքում, Շուշիի կենտրոնում: Եվ այդ-մենից հետո հայ ազատամարտիկները գրավեցին Շուշիի կենտրոնը, թշնամին խուճապի էր մատնվել: Շուշին ազատագրվեց 1992թ-ի մայիսի 9-ին: Եվ այդ ամենի համար մենք՝ հայերս, պետք է շնորհակալ լինենք մեր հայ ազատամարտիկներին, քանզի նրանց շնորհիվ է, որ այսօր Շուշին ազատագրված է:

Շուշին ազատագրված է...

Անահիտ Սիմոնյան

ՄԵՆՔ ԳԻՏԵՆՔ՝ ԻՆՉ Է ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՆՔ ԱՅՆ

Կրթությունը մեծ նշանակություն ունի առողջ հասարակություն ունենալու համար...

Մեզնից յուրաքանչյուրը պետք է գիտակցի և արժևորի դրա կարևորությունը:

Ավարտվեց ևս մեկ ամառային արձակուրդ՝ հիմք հանդիսանալով նոր ուսումնական տարվա սկզբի: Այսօր հասարակության խնդիրներից մեկն այն է, որ ոչ բոլոր աշակերտներն են ցանկանում սովորել՝ չգիտակցելով, թե որքան կարևոր են նույնիսկ ամենաանհեթեթ թվացող գիտելիքները: Իսկ ինչու՞ ենք մենք կարևորում այդ գիտելիքները. դրանք մեզ անհրաժեշտ են, որպեսզի, օրինակ, մենք լինենք տեղեկացված մեր պատմությունից, իմանանք, թե որքան դժվար օրեր են անցել մեր նախնիները, թե որքան են պայքարել ու մաքառել, որ մենք լինենք ազատ ու անկախ: Այդ անկախության շնորհիվ է, որ մենք կարողանում ենք մեզ զգալ լիարժեք, հզոր ու պաշտպանված՝ կախում չունենալով և ոչ մի այլ պետությունից: Ուրեմն եկե՛ք միախմբվենք, դառնանք մի մեծ բռունցք՝ հզոր ու ամուր, որը գիտի ազատության գինը և երբեք չի մոռանա, թե որքան դժվար է հասնել նրան, ինչն ինքը ունի իր ծնված պահից:

Անի Օչինյան

«Մարդիկ և բնավորությունը»

Աշխարհում կան շատ մարդիկ, որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ բնավորություն: Ինչքան շատ են մարդիկ, այնքան շատ են բնավորությունները: Մեկի մոտ շատ են բնավորության դրական գծերը, մյուսի մոտ՝ բացասական:

Շատ հաճախ մեզանից շատերը ցանկանում են, որ դիմացինը մտածի այնպես, ինչպես ինքն է մտածում, բայց այդպես չի լինում. յուրաքանչյուր մարդ յուրովի է պատկերացնում տվյալ երևույթը, և կարծիքը դրա մասին նույնպես յուրովի է լինում: Իսկ եթե բոլոր մարդիկ էլ մտածեն իրար նման, ապա կլինի միակարծություն, և կյանքը կզրկվի իր վառ գույներից ու այն կդառնա անհետաքրքիր: Շփվելով տարբեր մարդկանց հետ՝ մենք պետք է կարողանանք հանդուրժել նրանց բնավորությունները: Բայց ավելի հանդուրժող պետք է լինի լրագրողը. երբ նա գնում է հարցազրույցի, մեկը կարող է նրա հետ շատ սիրալիր լինել և կարգին պատասխաններ տալ, իսկ մյուսը կարող է տալ կոպիտ պատասխաններ և նույնիսկ չընդունել նրան: Այդ ամենից լրագրողը չպետք է ընկճվի, այլ պետք է հասկանա, որ բոլոր մարդիկ իրար նման չեն:

Անահիտ Պոզոյան

Անկախությունը եկեղեցականի աչքերով

Սեպտեմբերի 21-ին լրացավ Հայաստանի երրորդ հանրապետության անկախության 19-րդ ամյակը: Այդ թեմայով զրույց ունեցանք Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու սպասավոր Տեր Ստեփանոս քահանա Մարգարյանի հետ: Մեր այն հարցին, թե ինչ եք հասկանում անկախություն ասելով, Տեր հայրը պատասխանեց. «Անկախություն ասելով հասկանում եմ հետևյալ իրողությունը. մարդ պետք է հոգեպես և ֆիզիկապես լինի անկախ իր գործունեության բոլոր-բոլոր ասպարեզներում, բնագավառներում, ինքը ունենա իր կարծիքը»:

Իր խոսքում Տեր հայրը նշեց նաև. «Անկախությունը շատ բան է տվել մեզ, նախ այն, որ բազմերկիր այս աշխարհում մեզ հետ հաշվի են նստում, բազմաթիվ միջազգային ատյաններում Հայաստանը իր անկախ դրոշի ներքո կա, գոյություն ունի»:

Զրույցի ընթացքում պարզեցինք, որ, ըստ Տեր հոր, պետական այրերը, եկեղեցու կարծիքը հաշվի չառնելով, որոշ վրիպումներ արեցին՝ թույլ տալով կրոնական կազմակերպությունների գրանցմանը, որ այսօրվա աղանդավորներին մեծ առավելություն տրվեց և, ցավոք սրտի, այսօր այդ սխալը չեն կարողանում շտկել, ինչ-որ մեկ ուրիշ նորմալ, ճիշտ որոշում կայացնել: Չէ որ Հայաստանը քրիստոնեությունը պետականորեն ընդունած առաջին երկիրն է: Մեր ավանդական հավատքի եկեղեցին առաքելականն է: Այսօր բազմաթիվ այլադավ եկեղեցական կառույցներ եկել և մեր ժողովրդին ուզում են մասնատել՝ իրենց մութ գործերն իրականացնելու համար:

Եվ վերջում տեր հայրը Հայաստանի անկախ քաղաքացիներին մաղթեց, որ լինի խաղաղություն, կայունություն, հարատևություն և տնտեսական, ազգային բոլոր-բոլոր արժեքների բարելավում ու բարգավաճում:

Դավիթ Ուլիխանյան

«Այն ազգը, որը միասնական չէ, դատապարտված է կործանման»

Մեր գոյության բազմադարյա ուղին դասեր է թողել՝ թե չլինենք միասնական, ապա մեզ հեշտությամբ կհաղթեն մեր «վայ» հարևանները, որոնք դարեր շարունակ, արյան հոտից արբած, մարդասպանի կացինն են սրում... Այդ է վկայում նաև պատմությունը:

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» ուսումնասիրելիս մենք հասկանում ենք, որ հայ ազգը շատ ժամանակ միասնական չի եղել, որի հետևանքում տարբեր պետություններ գրավել են հայկական տարածքները: Դա շարունակվել է մինչև մեր օրերը և, ի վերջո, դարձել ենք մի բուռ:

Եղել են շատ դեպքեր, երբ հայ ազգը իր միասնականության շնորհիվ պաշտպանել է իր ինքնությունը, օրինակ Ավարայրի ճակատամարտը, որի ժամանակ հայ ազգը միավորվեց, մի բռունցք դարձավ, որպեսզի քրիստոնեությունը կրակապաշտությունով չբռնափոխեն: Այդ էր պատճառը, որ մեր ազգը կատաղի կռիվ տվեց իրենից երկուերեք անգամ շատ պարսից զորքի դեմ... Մարտից հետո Ավարայրի դաշտը դարձել էր արյան դաշտ, բայց հայոց զորքը ավելի քիչ զոհ տվեց, քան պարսից կողմը: Պատերազմի ժամանակ զոհվեց նաև մեծագույն հայորդիներից մեկը՝ Վարդան Մամիկոնյանը և դասվեց այն հերոսների շարքը, ում վաստակը հնարավոր չէ ուրանալ կամ գերագնահատել: Հայոց զորքի զոհերի թվում էին նաև հայոց մեծանուն նախարարներ:

Ցավոք, ազգս ունեցել է նաև դավաճաններ, որանք ուրացել են իրենց հայրենիքն ու ժողովրդին, բայց և սերունդները տվել են նրանց արժանի գնահատականը:

Պատմության տանջված ու տառապած էջերը թերթելով՝ հասկացանք, որ եթե հիմա մենք էլ չլինենք միասնական, ապա մեզ էլ հեշտ կլինի կործանել, և ամենակարևորը՝ պետք չէ լինել միասնական միայն ծայրահեղ ծանր իրավիճակներում, որից կախված լինի ժողովրդի հայ կամ քրիստոնյա մնալը, այլ պետք է միասնական լինել միշտ՝ ցանկացած իրավիճակում:

Դավիթ Ուլիխանյան

Ասույթներ

Հայրենասիրությունը, ում մոտ էլ որ նա լինի, ապացուցվում է ոչ թե խոսքով, այլ գործով:

Վ. Գ. Բելինսկի

Հայրենիքի նկատմամբ սերը վերացական հասկացություն չէ, այլ ռեալ հոգեկան ուժ, որը պահանջում է կազմակերպվածություն, զարգացում և մշակվածություն:

Ա. Ն. Տոլստոյ

Ես արդեն ավագ դպրոցի սան եմ

Պատմական իրողություններով պայմանավորված՝ կրթության դերը առավել կարևոր է եղել մեր ժողովրդի կյանքում և ինչ-որ կերպ կանխորոշել նրա ապագան: Մաշտոցյան գրերի ստեղծումը, դրան հաջորդած դպրոցաշինության ու կրթության վերելքը մեր ազգային մշակույթի ու գիտության զարգացման հիմքն են եղել: Ժամանակակից գիտելիքներով զինված սերնդի ձևավորումը մեր ժամանակի պահանջն է ու զարգացման գրավականը: Անշուշտ, յուրաքանչյուր ուսումնական տարի յուրահատուկ է ծնողների, ուսուցիչների ու աշակերտների համար, բայց կարծում եմ՝ այն առանձնահատուկ է առաջին և վերջին դասարանցիների համար, այն աշակերտների, ովքեր վերջին երկու տարվա ընթացքում պետք է կողմնորոշվեն՝ ինչ պետք է անեն և որտեղ պետք է շարունակեն իրենց ուսումը:

Անահիտ Սիմոնյան

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹՌԻՉՔ

«Ինչո՞վ է զբաղվում հայ երիտասարդը ազատ ժամանակ»

Ասված խոսք է՝ «Ժամանակ սպանողը մի յուրովի հանցագործ է»: Երբևէ մտածե՞լ եք այդ ուղղությամբ՝ ինչ կերպ եք դուք անցկացնում ձեր ժամանակը, արդյո՞ք վատնում եք այն՝ պարզապես օրն արևամուտին հասցնելու համար, թե՞ փորձում եք ժամանակը դարձնել գործիք՝ ինչ-որ նոր բան սովորելու համար:

Որպես նախաբան՝ կարծես թե խիստ էր, սակայն թեմայի արծարծումը ինքնանպատակ չէ. տարբեր հարցումների, կարծիքների հիման վրա եկել ենք հետևյալ եզրակացությանը՝ արդի երիտասարդությունը ունի ժամանակի ճիշտ կառավարման խնդիր: Հետաքրքիրն այն է, որ որոշ երիտասարդներ, նույնիսկ ուսանող չլինելով, աշխատանք չունենալով հանդերձ, չեն բողոքում իրենց առօրյայից: Հետաքրքիր է... Հարգելով յուրաքանչյուրի կարծիքը և այն քննարկման առարկա չդարձնելով՝ պարզապես փորձեցի ճշտել՝ իսկ ինչո՞վ է զբաղվում երիտասարդությունը ազատ ժամանակ: Կախված սեփական հետաքրքրություններից՝ զբաղվածության տեսակները փոքր-ինչ տարբերվում էին՝ հեռուստացույց դիտել, երաժշտություն լսել, գիրք կարդալ, ժամանակ անցկացնել ընկերների հետ և մի շարք այլ ժամանցի միջոցներ: Բայց կա մի բան, որն այսօր ընդհանուր զբաղմունք է բոլորի համար՝ անկախ տարիքից ու զբաղվածության աստիճանից: Խոսքն *ինտերնետի* մասին է: Իմ խնդիրը չէ անդրադառնալ ինտերնետի դրական կամ բացասական կողմերին, այլ հարցումների միջոցով պարզել, թե հիմնականում ինչ նպատակի են ծառայեցնում ինտերնետը: Որոշ մարդիկ միգուցե չմտնեն հետևյալ խմբի մեջ, բայց լայն մասշտաբով ողջ հասարակությունն օգտվում է «***Odnoklassniki.ru»*** հասարակական ցանցից՝ փոքր երեխաներից մինչև պաշտոնյա այրերը: Երիտասարդության լայն շրջանը ինտերնետից օգտվում է միայն այդ ցանցից օգտվելու համար: Նախորդ տարվա համեմատությամբ այս ոլորտում ևս տեղի են ունեցել թանկացումներ, սակայն ինտերնետ-ակումբներում հաճախորդների թիվն այդքան էլ չի նվազել: Համացանցից օգտվող վանաձորցիների համար ձեռնտու է ինտերնետ-ակումբներում 1 ժամվա համար 200-400 դրամ վճարելը: Ինչպես տեղեկացա ինտերնետ-ակումբների աշխատողներից, մեծահասակները շատ քիչ են հաճախում և միայն երբեմն օգտվում են գիտական կայքերից: Ակումբների աշխատակիցները ևս փաստում են, որ վանաձորցիների հետաքրքրությունը համացանցում սկսվում և սահմանափակվում է միայն ***«Odnoklassniki.ru»*** կայքով: Թե ինչու է ինտերնետը այսօր ծառայում զուտ ծանոթությունների համար, բացատրվում է, որ ոմանք իրական կյանքում ունեն որոշակի բարդույթներ, որոնք հաղթահարվում են վիրտուալ աշխարհում:

Դպրոցականների և ուսանողների համար ինտերնետը նաև դասանյութ հայթայթելու միջոց է: Եվ այդ դեպքում միայն նրանք ստեղնաշարի վրա մշտական տառերի փոխարեն գրում են ***google*** կամ ***yandex:*** Իհարկե, այս բոլոր տվյալները չեն վերագրվում յուրաքանչյուրին:

Չմոռանամ նշել, որ ես էլ եմ համակարծիք այն մարդկանց հետ, ովքեր ինտերնետը համարում են մեր ժամանակի ձեռքբերումը, սակայն, որպես ուսանող, կոչ եմ անում չմոռանալ մարդու լավագույն ընկերոջ՝ **գրքի** գոյության մասին: Եվ մեկ էլ՝ մի կորցրեք ժամանակի զգացողությունը հատկապես ***«Odnoklassniki.ru»*** կայքում:

Հ. Գ. Վերջերս շատ է խոսվում, որ ***«odnoklassniki.ru»*** կայքից հնարավոր չի «ջնջվել», ասել է, թէ ջնջել սեփական տվյալները: **Մենք գտել ենք լուծումը.** կատարեք հետևյալ քայլերը՝

1. Մտեք ձեր էջը /**Моя страница**/
2. Ձեր բրաուզերի հասցեի տողում եղած հասցեի վերջում ավելացրեք՝ **&st.layer.cmd=PopLayerDeleteUserProfile** և սեղմեք **Enter**
3. Կհայտնվի հետևյալ պատուհանը՝


Удаление своего профиля

ВНИМАНИЕ!
Все Ваши личные данные будут удалены без возможности восстановления!

Вы потеряете на «Одноклассниках»:
— загруженные личные фотографии и фотоальбомы;
— найденных друзей и знакомых;
— удобную платформу для общения;
— море удовольствия и радости.

Пароль:

Удалить Отмена

4. Հավաքեք Ձեր գաղտնաբառը ու սեղմեք **удалить** կոճակը ու կհամոզվեք, որ հնարավոր է թոթափել կախվածությունը:

Մենք ընդամենը առաջարկում ենք լուծում, իսկ թե արդյոք դուք պատրա՞ստ եք հրաժարվել այս կայքից, որն արդեն իսկ դարձել է մեզ նույնչափ բնորոշ, որքան դոլման, խաշը, գինին, կոնյակը, ծիրանը... Որոշեք:

«Թռիչք» հկ-ի կրթական բաժնի և երիտ թևի պատասխանատու, ՎՊՄԻ-ի հայկական բաժնի մագիստրանտ Ալիսա Գալստյան

«ՀԱՎԱՏ»

Իսկ դուք երբևէ մտածել ե՞ք, թե ինչ է հավատը: Յուրաքանչյուր մարդ իր մեջ հավատում է ինչ-որ մեկին, կամ ինչ-որ մի բանի: Իսկզբանե բնությունը ստեղծված է այնպես, որ մարդը միշտ կախվածություն ունի ինչ-որ երևույթներից:

Կախվածությունն առաջ է բերում տարաբնույթ զգացողություններ, որոնց ազդեցությամբ ձեռք ենք բերում հավատ, կամ կորցնում այն. հավատում եմ քեզ, հավատում եմ մորս, Աստծուն, իմ ապագային:

Սակայն շատ հաճախ մարդիկ հավատ հասկացությունը սահմանափակում են միայն կրոնական հավատքի շրջանակներում: Սկսում են, չգիտես ինչու, խուսափել հավատավոր երևալուց... Բայց չէ՞ որ ամենաիմաստուն եռամիասնությունը Հույս-Հավատ-Սեր օղակն է: Եթե դու լավատես ես, ապա հույսով ես լցվում: Եթե հույսով լի է սիրտդ, ուրեմն հավատում ես, այդ թվում նաև դիմացինիդ, քո սկզբունքներին կամ ինչ-որ երևույթի:

Թվարկվածի արդյունքում ստացվում է այդ ամենի միախառնումից ծնված, անփոխարինելի և անհրաժեշտ սերը: Սակայն դրա ազդեցությունն էլ միանշանակ չէ, հաճախ այն վերածվում է հիվանդության: Իսկ հիվանդագին հավատը որոշ դեպքերում հանգեցնում է ատելության: Հարց կառաջանա՝ ինչու՞: Ամենայն հավանականությամբ ինչքան շատ ես սիրում ու հավատում, այնքան ավելի ես վստահում և երբ հանկարծ զգում ես, որ սասանվում է քո հենարանը, անմիջապես իրարամերժ զգացողություններ են առաջանում քո մեջ և կորցնում ես հավասարակշռությունդ...

Ու այս գործընթացներն իրենց դրական ու բացասական ազդեցություններով աննդհատ ներկա են մեր կյանքում՝շարունակաբար հերթափոխելով միմյանց:

Ստացվում է, որ բացի հույս - հավատ - սեր միասնությունից, հնարավոր է նաև հույս-հավատ-ատելություն տարբերակը...

Ուղղակի հիշենք, որ ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ: Ուրեմն սիրեցեք, հավատացեք և նորից հուսով ու հավատով սկսեք ամեն ինչ:

Հավատացեք դիմացինին այնքան, որքան ձեզ եք հավատում:

Արփինե Մարտիրոսյան, «Թռիչք» ՀԿ-ի երիտթևի անդամ

Այսօր կարծես երիտասարդների շրջանում միտում է նկատվում եկեղեցի գնալ ոչ թե հաշվի առնելով նրա հոգևոր արժեքն ու այն հավատը, որը գալիս է դարերի խորքից ու պիտի փարոս լինի յուրաքանչյուրիս կյանքում, այլ՝ այցելությունը ինչ-որ առումով կրում է ինքնանպատակ բնույթ և հաճախ եկեղեցին դիտարկվում է միայն որպես կառույց: Այնինչ եկեղեցու իրական արժեքը հոգևորի մեջ է: Եվ հաշվի առնելով այս ամենը՝ պետք է նշել, որ, այնուամենայնիվ, ամեն ինչ կորած չէ. ահավասիք, սեպտեմբերի 19-ին Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի Եկեղեցասեր երիտասարդաց միության նախաձեռնությամբ կազմակերպվեց ուխտագնացություն՝ Ալավերդու սուրբ Նարեկացի եկեղեցի, Ախթալայի սուրբ Մարիամ Աստվածածին վանական համալիր և Քոբայրավանք: Ուխտին ներկա էին նաև «Թռիչք» կրթամշակութային և խորհրդատվական հասարակական կազմակերպության երիտասարդական թևի անդամները: Ուխտագնացները Ալավերդի քաղաքում մասնակցեցին պատարագին, ստացան հաղորդություն և իրենց հուզող հարցերի պատասխանները՝ Արմեն սարկավագ Սողոյանից, ով ևս մասնակցում էր ուխտագնացությանը:

Վերջում տարբեր կառույցներ ներկայացնող երիտասարդները հույս հայտնեցին, որ նման ուխտագնացությունները կդառնան շարունակական, և մասնակիցները կներկայացնեն ոչ թե տարբեր կազմակերպություններ, այլ եկեղեցասեր երիտասարդություն, ովքեր, իսկապես, հոգևոր արժեքների ու հավատի կրողն են:

Ժենյա Նասիբյան

Սկիզբը 1-ին էջում

«Թռիչք» Արագածի վրայով կամ մեր արտասովոր արկածները Արագած լեռան վրա

Մետաղական ծանրությամբ Արագածին գամող շորերն իրենց մեջ չէին կարողանում ամփոփել մեր ոգևորությունն, ու այն թևածում էր Արագածի քարքարոտ լանջերն ի վեր: Ադրենալինի պակաս չէր զգացվում, առավելապես, երբ մեր ոտքերի տակ կես մետր լայնությամբ կածանի եզրից ուղղաձիգ կտրվածքով անդունդները կատարից գահավիժում էին մինչև խառնարանի հատակը:

Քարերը դարձել էին սայթաքուն, երկնքից անխնա թափվում էին տեղումների բոլոր տեսակները, բայց մեր պայքարը բնական պայմանների ու բնության տարերքների դեմ տվեց ցանկալի արդյունք... և ահա մենք լեռան կատարին ենք: Արշավախմբի ոգևորությունից ծնված ձայնային գամման հավակնում էր խլացնել ամպի որոտը, սակայն հստակ գիտակցում էինք, որ հարկավոր է որպե առաջ իջնել գագաթից, քանի դեռ չեն սկսել ձայթել կայծակները:

Վայրեջքը վերելքին գրեթե չէր զիջում իր դժվարությամբ: Ինչ-որ տեղ ավելի դժվար էր, որովհետև իջնում էինք գրեթե ուղղաձիգ լանջով, որի վրա տարբեր ուղղություններով ցցված տարաչափ ու տձև քարաբեկորներն արդեն ծածկված էին կարկտախառն ձյան շերտով: Վտանգավոր սահանկումներից խուսափելու համար տղաները առանձնահատուկ ուշադրությամբ ուղեկցում էին աղջիկներին: Մինչև վերջին թելը թրջված, սառած, ոգևորությամբ համակված՝ կատակելով իջանք մինչև ձյունադաշտ ու այդ պահին սկսեցին մեր գլխավերևում որոտների ուղեկցությամբ փայլել կայծակները՝ հանց հրավառություն ի նշան մեր հաղթարշավի:

Երբ վերադարձանք Քարի լիճ, մեր միկրոավտոբուսի վարորդն արդեն վառելիք էր հայթայթել ու մեզ էր սպասում: Մեքենայի վառարանները չէին օգնում, քանզի ծայրահեղ թրջվածությունն ու սառը եղանակը համառորեն փորձում էին կոտրել արշավի մասնակիցների կամքն ու այն գրեթե ստացվում էր, երբ երկարամյա սկաուտական փորձառությունն ունեցող Տիգրանի գլխում միտք ծնվեց. հենց ճանապարհի հարևանությամբ՝ անտառի փեշին, խարույկ կազմակերպել...

Խարույկը կայացավ: Իր կրակի ջերմությամբ վերականգնեց բոլորիս կորովն ու արթնացրեց պայքարի ոգի: Կրակի շուրջն անցկացրած մի քանի րոպեները բավարար եղան, որպեսզի իսպառ վերանան բոլոր անկումային տրամադրությունները, թացությունն ու մրսածությունը: Դրանց արագ փոխարինելու եկան օրվա ընթացքում տեղի ունեցած զավեշտական իրավիճակների շուրջ ուրախ զրույցներն ու կատակները:

Երբ վերադարձանք Վանաձոր՝ արդեն մութ էր, բայց «Թռիչք» հկ-ի գրասենյակի բակը կարծես լուսավորված էր արշավորդների գոհունակ ժպիտներից ու աչքերի փայլից: Իսկ այդ օրվա դրոշակակիր Վաչիկը գրասենյակ էր տանում արդեն երկրորդ անգամ Արագածի գագաթը հաղթահարած դրոշը, որը թրջվելուց ավելի վառ երանգներ էր ստացել...

Հովհաննես Նիկողոսյան

«Թատրոնը և երիտասարդությունը»

Ըստ իս՝ թատրոն հաճախում են գեղագիտական հաճույք ստանալու համար: Որոշ հանդիսատեսներ էլ թատրոն են հաճախում՝ պարզապես պարապ ժամանակը լցնելու: Բայց չմոռանանք, որ դեռ Արտաշես թագավորի գահակալության օրոք հայերս ունեցել ենք թատրոն, և 21-ոդ դարի առաջին վարագույրը բացվել է Հայաստանում: Հայ թատրոնը դարերի պատմություն ունի և միշտ էլ եղել է մշակույթը ներկայացնող ինքնատիպ հարստություն: Արժեքների հարափոփոխ այս դարում, շատ այլ երևույթների հետ, ցավոք, թատրոնն էլ զիջել է իր դիրքերը: Դրա պատճառները մի քանիսն են՝ կենցաղայինից մինչև հոգևոր-մշակութային մակարդակի որոշակի անկում, արժեհամակարգի փոփոխություն, որի ընթացքում մտավորականի կերպարն ու նրա գործն ըստ արժանվույն չեն գնահատում: Այսօր երիտասարդին առավել չափով գրավում են նյութական ապահովվածություն խոստացող մասնագիտությունները և բիզնեսը: Այս ֆոնին կարծես մի տեսակ երկրորդ պլան է մղվում հոգևոր արժեքը:

Ես՝ իբրև հայ մարդ, ՀՀ քաղաքացի և արվեստի նորաթուխ ծառա, ուզում եմ կոչ անել երիտասարդությանը, որ հաճախեն թատրոն, քանզի այն ամեն գեղեցիկն ու բարոյական արժեքները, որ ուզում ես տեսնել ու ընկալել, կգտնես թատրոնում:

Թատրոնի նկատմամբ երիտասարդների վերաբերմունքը պարզելու համար իմ վարած զրույցներից մեծ սիրով ձեզ եմ ներկայացնում պատառիկներ:

✓ Թատրոնը երիտասարդությանը առաջին հերթին տալիս է խորը դաստիարակչական դասեր: Երիտասարդի մեջ զարգացնում է ճաշակ գեղեցիկի նկատմամբ:

Ժիրայր Ալեքսանյան, *Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դիպլոմանտ*

✓ Թատրոնը երիտասարդի մտահորիզոնում զարգացնում է երևակայությունը, բարձրացնում կենսամակարդակը և սովորեցնում է ճիշտ մտածել, ճիշտ խոսել կյանքի բոլոր պարագաներում:

Սասուն Սահակյան, *կինոռեժիսոր*

✓ Թատրոնն ինքնարտահայտման միջոց է, որի օգնությամբ մարդիկ հաղորդակցվում են գեղարվեստական մտածողության ճանապարհով:

Հովհաննես Նիկողոսյան, «Թռիչք» *հկ-ի նախագահ, դրամատուրգ:*

Իվան Անտոնյան, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճուղի 4-րդ կուրսի ուսանող, «Թռիչք» հկ-ի անդամ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԹՌԻՉՔ

ՊԱՊՍ

Պապս այգում վարում, ցանում,
Ընկուզենու ծառ է տնկում:
Հիշատակ է նա մեծ թոռնում
Թոռոնիկներին իր սիրելի:
Ընկուզենու հովանու տակ
Խաղում ենք մենք ուրախ, զվարթ:

Իրինա Ղուկասյան
11 տարեկան
«Խաչվող ուղիներ» ՍՀԿ

Հայրենիք իմ անուշ, անգին,
Որ ապրել ես դարեդար,
Յաթաղանից պաշտպանվել ես
Իմ քաջ, ազատ Հայաստան:
Սուրն է բեկվել քո ձակատին
Տոկուն, հզոր Հայաստան,
Արարատն է ականատեսն ու վկան,
Նոր ու ազատ Հայաստան:

Ցոլակ Մուկուչյան,
14 տարեկան

Հայաստան

Հայաստանը ես եմ, իմ հայրենիքն է,
Իմ ծննդավայրն է, իմ ընտանիքը,
Հայոց տառերն են, հայ
պատմությունը,
Հայրենի հողն ու հայրենյաց
ջուրը:

Նանե Բեգլարյան
10 տարեկան
Կրտսեր «Հայորդաց» խմբակի սան

Կարոտել եմ Հայաստանին

Կարոտել եմ Հայաստանին,
Էն քարքարոտ մեր սարերին,
Արագածի պարզ ձակատին,
Ու Սևանի սիրուն տեսքին,
Կարոտել եմ երդին, պարին,
Ջվարթնոցի սիրուն քարին,
Մեր Մասիսի թաց աչքերին
Որ նայում է Հայաստանին,
Մեր հայկական հին ադաթին,
Հայաստանի հողին, օդին,
Կանաչազարդ անտառներին,
Մայրաքաղաք Երևանին,
Ու Լոռվա էն խոր ձորերին,
Գառնի, Գեղարդ հրաշքներին,
Կարոտել եմ Հայաստանին:

Կյանքը

Կյանքը խաղ է,
Որ պետք է խաղաս,
Կյանքը ցավ է,
Որ պետք է դիմանաս,
Կյանքը սեր է,
Որ պետք է սիրես,
Կյանքը երջանկություն է,
Որ եջանիկ ապրես,
Կյանքում սխալներ կանես,
Բայց կարող ես ուղղել,
Միշտ շարունակես
Երջանիկ ապրել:

Վաչե Մատինյան

ՀՈՒՇԵՐԻ ԳՈՒՅՆԸ

Յուրաքանչյուր մարդու կյանք տոգորված է երազանքներով ու անմոռաց հուշերով: Հուշերը մարդուն տալիս են թախծախառն կարոտ ու, իրենց հայտնվելով, ստեղծում մի աղջամուղջային ու մառախլապատ տրամադրություն, որոնք, կազմելով գունային միասնություն, սկսում են ներկել հուշերի կտավը ու, իջնելով իրենց ծիածանաթեվ ու երազային բարձրությունից, առաջացնում են երանության ու կարոտի անափ զգացում:

Հուշերի գունազարդ կտավում պատկերված յուրաքանչյուր պատկեր, կոլորիտային գունագեղությամբ, ունի իր պատմությունն ու հերոսները, որին պահելով հոգուդ ամենաթաքուն ու ջերմ անկյունում՝ շարունակում ես քայլել առաջ ու կտավիդ գույների հերթափոխումը հաջորդում է իրար, ու դու գնում ես փնտրելու նոր գույներ, գույներ, որոնք անծանոթ են ու նոր...

Լիլիթ Համբարձումյան

Նա անհանգիստ քայլում էր սենյակում՝ ինչ-որ բան խաղացնելով ձեռքերի մեջ: Հետո նստեց, փորձեց հանգստանալ: Բայց ներսից ինչ-որ մի բան տակնուվրա էր անում նրա հոգին, սակայն դա անհանգստություն չէր և ոչ էլ վախ էր. դա երջանկություն էր: Նա ապրում էր իր կյանքի երջանկության գուցե և ամենամեծ ակնթարթը: Նրա հոգին լի էր սիրով ու բերկրանքով:

Վեր կացավ տեղից, մոտեցավ պատուհանին: Անձրև էր տեղում: Եվ եթե մի ժամանակ նա կտխրեր դրանից, ապա այսօր անձրևի կաթիլների տիկ-տակը նրա հոգու մեջ երաժշտության հնչյուններ էին դառնում, և կարծես ամեն բան հյուսվում ու ներդաշնակվում էր: Պիտի որ ամեն ինչ կատարյալ լիներ. միտքը ձախրում էր բավարարվածության զգացումից, հոգին թռչում էր երջանկության ցասումից, աչքերը վառվում էին խանդավառ հրով, իսկ անձրևը ամբողջացնում էր ամենը: Հանկարծ անձրևը դադարեց, իսկ նա քարացավ... Հետո սթափվեց: Մի քանի րոպե նայեց դուրս, հետո մոտեցավ գրասեղանին, վերցրեց մատիտն ու նոթատետրի մեջ անխնամ ձեռագրով գրեց. **«Մեր կյանքի ամենաերջանիկ ու ամենատխուր պահերին մենք, միևնույնն է, լինում ենք միայնակ»**:

Ժենյա Նասիբյան

Գրքի կախարդական աշխարհը

Պատահել է արդյոք, որ ամառվա տապին զգաք սառնաշունչ ձմեռային քամի... Դա այդ կախարդական աշխարհի ազդեցությունն է մեզ վրա:

Կա մի զարմանահրաշ ու հետաքրքրաշարժ աշխարհ, որ մեզ տանում է դեպի մտքի անսահմանություն ու գիտելիքների հարստացում: Ընդամենը չորս տառ, բայց մի մեծ-մեծ աշխարհ՝ զարմանահրաշ աշխարհ, որ անթիվ-անհամար մարդկանց ձակատագրեր է որոշել: Այն մարդու կյանքի մշտական ուղեկիցն է, որի միջոցով մարդը կարողանում է եզրակացություններ անել, այն վերափոխում է մարու ներաշխարհը, օգնում է ձիշտ կողմնորոշվել ու գործել: Այն մարդկանց բարի ընկերն է, որ միշտ խորհուրդներ է տալիս ու սովորեցնում ձիշտ ապրել: Ըստ իս աշխարհի այդ առաջին ու անկրկնելի հրաշալիքը գիրքն է՝ վեհ ամենից ու ամենքից: Այն վաղուց եղել է, կա ու կմնա հավերժ՝ որպես շարունակվող կյանքի խորհրդանիշ:

* * *

Բազմազան ու հրապուրիչ է գրքերի աշխարհը: Մայրական հեքիաթներիվ ու դպրոցական նստարանից հայտնում ու մինչեվ կյանքի վերջ չես ուզում հեռանալ այնտեղից: Անվերջանալի լաբիրինթոսի պես այն քեզ ձգում է դեպի իր խունացած էջերը՝ լի գլխապտույտ անակնկալներով ու հետաքրքրաշարժ բացատրություններով, հույզերով:

Ցոլակ Մուկուչյան

«Ես արդեն մեկ տարեկան եմ»

Այս տարին «Թռիչք» ԿՄ և Խ հկ-ի համար բազում նոր ձեռքբերումների տարի էր, և այդ ձեռքբերումների, հաջողությունների թիվը համալրեց մեր թերթը, որը հնարավորություն է տալիս մեզ՝ թռիչքակիցներիս, դրսևորվել նաև գրավոր ձևի մեջ՝ ընթերցող լայն հասարակության հետ հաղորդակից դառնալով թերթի միջոցով: «Թռիչք» թերթը մեր լավագույն բարեկամն է, մեր սպասված հյուրը, բոլորիս ամենահարազատ թերթը:

Այս ամիս մեր ձեռքբերումները համալրեց այն, որ «Թռիչք» թերթը արդեն մեկ տարեկան է, և մենք մեծ ուրախությամբ և ոգևորությամբ ենք բարձրաձայնում այդ փաստը. չէ՞ որ դա մեր իսկ աշխատանքի արդյունքն է, մեր առօրյայի մի մասնիկը, որի հետ կապվել են մեր երեխաները, հկ-ի բոլոր անդամները՝ անկախ տարիքից, և, իհարկե, լրագրողական խմբակի սաները: Թերթը նրանց հնարավորություն է տալիս ինքնադրսևորվել, աշխատել իսկական փոքրիկ լրագրողի մարտավարությամբ:

Բոլոր թռիչքակիցների անունից բազում մաղթանքների փոխարեն ընդամենը մեկ նախադասություն՝ **շնորհավոր ծնունդդ**, և թող բազում նմանօրինակ ծնունդների օջախը լինի մեր «Թռիչք» հասարակական կազմակերպությունը:

Արդեն մեկ տարեկան ենք, և ինչպես ամեն մի մեկ տարեկան, այնպես էլ մենք, մինչ այս պահը փորձել ենք քայլել: Սակայն մի քանի քայլ անելուց հետո կորցրել ենք մեր հավասարակշռությունը և վայր ենք ընկել: Իսկ հիմա մենք արդեն կարողանում ենք քայլել. քայլել միշտ առաջ և ամուր քայլերով: Մենք նոր ենք կյանք մտնում: Միգուցե դանդաղ, բայց հաստատուն քայլերով:Եվ հավատում ենք, որ ամեն ինչ դեռ առջևում է. չէ՞ որ կյանքն այնքան անակնկալներով լի է:

Մանե Նալբանդյան

Ժամանակի պահանջներին համաքայլ ընթացող կրթական համակարգի ձևավորումը հասարակական կազմակերպությունների զարգացման հրամայականն է: Այսպիսի քայլքով է առաջնորդվում «Թռիչք» հասարակական կազմակերպությունը. թև է տալիս մեզ՝ պատանիներիս:

Ցանկանում ենք, որ «Թռիչք» հկ-ն մեր ճանապարհին լինի վառվող, անմար փարոս: «Թռիչք» հկ-ն, իր առողջ անձնակազմով, մեզ ուղղորդում է քաջության, բարու, գեղեցիկի և հայրենասիրության ճանապարհով:

Հարություն Քարաջյան

2010 թվականի հունվար ամսից «Թռիչք» հկ-ի նախաձեռնությամբ 24-րդ դպրոցում գործում էր «Պատանի գրքասերի խմբակ»–ը, որի աշխատանքները կազմակերպում և իրականացնում էին «Թռիչք»-ի երիտթևի անդամները՝ կազմակերպության մշակութային բաժնի պատասխանատու Լիլիթ Համբարձումյանի գլխավորությամբ: Դասընթացները տևեցին 5 ամիս, և ավարտին մասնակիցները վկայականներ ստացան:

Խմբակի գործունեության տրամաբանական շարունակությունը հանդիսացավ գրական-գեղարվեստական խմբակի ստեղծումը, որի նպատակն է պատանիներին ավելի մոտիկից ծանոթացնել գեղարվեստական ստեղծագործություններին, գրական հերոսներին, նրանց մոտ զարգացնել վերլուծական մտածողությունը, նպաստել բառապաշարի հարստացմանն ու, ի վերջո, ձևավորել կիրթ, բանիմաց, ընթերցասեր ու խելացի վաղվա քաղաքացի: Խմբակում ընդգրկված պատանիների համար պարբերաբար կազմակերպվում են տարաբնույթ հանդիպումներ, գրական-գեղարվեստական միջոցառումներ, ընթերցումներ, քննարկումներ: Խմբակի աշխատանքները դարձյալ ղեկավարում է Լիլիթ Համբարձումյանը:

Այժմ նախապատրաստվում է և առաջիկա օրերին կիրականացվի գրական միջոցառում՝ բաղկացած երկու մասից՝ «Գյուղացի Համբոյի դատավարությունը» և քննարկում «Գիքորականությունը մեր օրերում» թեմայով:

Կազմակերպության
մշակութային բաժին

Հայտարարություն

«Թռիչք» ԿՄ և Խ հկ-ն հայտարարում է նոր լրագրողական խմբակի մասնակիցների ընդունելություն՝ մրցութային կարգով: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է նոյեմբերի 1-7-ը «Թռիչք» հկ-ի գրասենյակ ներկայացնել մեկ էջի սահմանում ստեղծագործական շարադրություն՝ «Ինչու եմ ուզում դառնալ այս խմբակի անդամ» թեմայով և ծննդյան վկայականի պատճեն: Դիմել կարող են 13-14 տարեկան աշակերտները:

Գրասենյակի հասցեն՝ Թատերական 6, հեռ. 2-45-07

Հրատարակիչ՝ «Թռիչք» հասարակական կազմակերպություն, **«ԹՌԻՉՔ»** թերթի խմբագրություն
Հասցե՝ Թատերական 6, հեռ.՝ 2-45-07
Գլխավոր խմբագիր՝ **ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**
Խմբագիր՝ Ալիսա Գալստյան

Ծավալը՝ 1 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ **300** օրինակ
Համակարգչային ձեւավորումը՝
Արմեն Օսիպովի

Տպագրության որակի համար
պատասխանատու է տպարանը:
Թերթը տպագրվել է՝ **«ՍԻՄ տպագրատուն»** ՍՊԸ-ում
ք. Վանաձոր, Շիրակացի 4ա, հեռ.՝ 4-03-29